

Համարը N 128
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ԼՂՀՊՏ-ում չի հրապարակվել
Ընդունող մարմինը ԼՂՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ԼՂՀ Վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 25.06.2002

Տեսակը Ինկորպորացիոն
Կարգավիճակը Գործում
Ընդունման վայրը Ստեփանակերտ
Ընդունման ամսաթիվը 25.06.2002
Ստորագրման ամսաթիվը 25.06.2002
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ "ԼԻՑԵՆԶՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ" ԼՂՀ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊՂԱՅՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5" հունիսի 2002թ.

N 12

ք.Ստեփանակերտ

"Լիցենզավորման մասին" Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին

"Լիցենզավորման մասին" Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով և հիմք ընդունելով "Լիցենզավորման մասին" Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ, 17-րդ և 43-րդ հոդվածները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Սահմանել, որ «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ **լիցենզավորման** ենթակա գործունեության տեսակների աղյուսակով (այսուհետ՝ աղյուսակ) նախատեսված **լիցենզավորման** ենթակա գործունեության տեսակը լիցենզավորող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմիններ են հանդիսանում համապատասխանաբար՝

- 1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությունը՝ աղյուսակի 3-րդ բաժնի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով.
- 2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը՝ աղյուսակի 7-րդ բաժնի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով.
- 3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը՝ աղյուսակի 10-ին բաժնի 1-ին, 15-րդ բաժնի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով և 17-րդ բաժնի 12-րդ կետով.
- 4) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը՝ աղյուսակի 9-րդ բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով.
- 5) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը՝ աղյուսակի 16-րդ բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով.
- 6) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարությունը՝ աղյուսակի 6-րդ բաժնի 6-րդ կետով, 14-րդ բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ և 17-րդ բաժնի 8-րդ կետով.
6.1) Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարությունը՝ աղյուսակի 16¹-ին բաժնի 1-ին և 2-րդ կետերով, 16.2-րդ բաժնի 1-ին և 2-րդ կետերով.
- 7) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանությունը՝ աղյուսակի 1-ին բաժնի 8-րդ կետով.
- 8) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը՝ աղյուսակի 1-ին բաժնի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով.
- 9) համապատասխան լիցենզավորող մարմինները՝ աղյուսակի 17-րդ բաժնի 1-ին կետով:
(1-ին կետը խմբ., փոփ. 10.12.2002 N 73, խմբ. 28.06.2005 N 290, խմբ. 26.02.2008 N 88, փոփ., լրաց. 28.03.2012 N 180-Ն, խմբ. 25.01.2013 N 13-Ն, փոփ., լրաց. 04.03.2014 N 99-Ն,

խմբ. 25.09.2015 N 617-Ն, փոփ., լրաց. 17.11.2017 N 175-Ն)

2. Սահմանել, որ «**Լիցենզավորման մասին**» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված պարզ ընթացակարգով լիցենզիաները տրամադրող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմին Է հանդիսանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

(2-րդ կետը փոփ. 10.12.2002 N 73, փոփ. 26.02.2008 N 88, փոփ. 25.01.2013 N 13-Ն, փոփ. 25.09.2015 N 617-Ն)

3. Հաստատել պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաների NN 1, 2 և 3 ձևերը (կցվում են):

4. Սահմանել, որ բարդ ընթացակարգով տրվող լիցենզիաների ձևերը սահմանվում են համապատասխան **լիցենզավորման** կարգերով:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության պետական վարչությանը՝ 15-օրյա ժամկետում մշակել և սույն որոշման 1-ին կետում նշված նախարարություններին ու գերատեսչություններին տրամադրել լիցենզավորող հանձնաժողովների օրինակելի կանոնադրությունը:

6. Սույն որոշման 1-ին կետում նշված նախարարություններին և գերատեսչություններին՝ ա) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության պետական վարչության կողմից մշակված լիցենզավորող հանձնաժողովների օրինակելի կանոնադրության հիման վրա 15-օրյա ժամկետում հաստատել լիցենզավորող հանձնաժողովների կանոնադրությունները:

բ) մեկամսյա ժամկետում մշակել և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնել համապատասխան **լիցենզավորման** կարգերը:

գ) վեցամսյա ժամկետում մշակել և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնել համապատասխան գործունեության իրականացման կարգերը:

6¹. «**Լիցենզավորման մասին**» ԼՂՀ օրենքով նախատեսված լիցենզավորող մարմիններին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել տեղեկատվություն լիցենզիաների տրման, գործողության երկարաձգման, վերաձևակերպման, գործունեության իրականացման վայրի փոփոխության վերաբերյալ՝ նշելով՝

ա) լիցենզավորված իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը, լիցենզավորված անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը,

բ) **լիցենզավորման** ենթակա գործունեության իրականացման վայրը (նշվում է, եթե սահմանված կարգով **լիցենզավորման** ենթակա գործունեությունը պետք է իրականացվի միայն համապատասխան վայրում),

գ) **լիցենզավորման** ենթակա գործունեության տեսակը,

դ) լիցենզիայի համարը և այն տալու ամսաթիվը:

(6¹-ին կետը լրաց. 04.03.2014 N 99-Ն, փոփ. 25.09.2015 N 617-Ն)

7. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 29-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տնտեսական գործունեության առանձին տեսակներով զբաղվելու կարգի հաստատման **մասին**» թիվ 294 որոշումը:

ԼՂՀ վարչապետ

Ա. Դանիելյան

Հաստատված է
ԼՂՀ կառավարության
2002թ. հունիսի 25-ի
թիվ 128 որոշմամբ
Ձև N 1



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Չ Ի Ա

(գործունեության տեսակը)

Լիցենզավորող մարմինը _____

Լիցենզիայի համարը _____

Կազմակերպության անվանումը _____

Կազմակերպության գտնվելու վայրը _____

Տրված է _____

200 թ.

Գործողության ժամկետը _____ անժամկետ

ստորագրությունը

Կ.Տ.

Հաստատված է
ԼՂՀ կառավարության
2002թ. հունիսի 25-ի
թիվ 128 որոշմամբ
Ձև N 2



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Չ Ի Ա

(գործունեության տեսակը)

Լիցենզավորող մարմինը _____

Լիցենզիայի համարը _____

Անհատ ձեռնարկատիրոջ անվանումը _____

Բնակության վայրը (հասցեն) _____

Տրված է _____
200 թ.

Գործողության ժամկետը _____

անժամկետ

ստորագրությունը

Կ.Տ.

Հաստատված է
ԼՂՀ կառավարության
2002թ. հունիսի 25-ի
թիվ 128 որոշմամբ
ՁԱ N 3



Լ Ե Ռ Ա Յ Ի Ն Ղ Ա Ր Ա Բ Ա Ղ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Լ Ի Ց Ե Ն Չ Ի Ա

(գործունեության տեսակը)

Լիցենզավորող մարմինը _____

Լիցենզիայի համարը _____

Ֆիզիկական անձի անվանումը _____

Բնակության վայրը (հասցեն) _____

Տրված է _____
_____ 200 թ.

Գործողության ժամկետը _____

անժամկետ

ստորագրությունը

Կ.Տ.

